

Փուշ ու նիդակ չ'երեւիր,
Ո՞վ յար յիս վէրք կը բանայ.
Արցունքն աչքէս չի դադրիր.
Դուն ինձ, մա՛յր իմ, ի՞նչ ըրիր:

Ուրիշ ողբերգ մը որ իր միայնութեան
չարհարանքին, ստուերներու հետ ապրած
անմխիթար կեանքին պատկերը կը դծէ,
Բարձր տիտղոսութեամբ եռատող փոքրիկ բա-
նաստեղծութիւնն է (Թէոֆիլ. Ամէնուն
Տարեցոյցը, 1915, 146), գրուած 1907ին,
լքուած ու մենաւոր, մօրմէն ու սիրելի-
ներէն զրկուած մարդու ճիշդ: Այդ ողբ-
երգը, արեւելահայ ու միջնադարեան կամ
աշուղային շէշտով մը գրուած, արեւմե-
տահայ գրականութեան մէջ նորութիւն
մըն է ձեւական արտայայտութեամբը.

Անկողնոյ տեղ լո՛վ բարձ մը,
Բարձին վըրայ լո՛վ փոս մը
Գտնել ո՛հ դառն է, Տէ՛ր իմ:

Ոտիցը տեղ լո՛վ հետք մը,
Գըլո՞ւխ... մազի լո՛վ թել մը
Գտնել ո՛հ դառն է, Տէ՛ր իմ:

Եւ երբ ծովուն կաթիլն յետին ցամաքի
Հուսկ հոսանուտ իր հեւքին մէջ պրկելով
Լուսաբերին նըշուլագեղ կաթ գորով,
Պիտի յառնէ շիրմէն, համակ եւ աչքի

Պիտի փոխուի Վըմախս հանգէպ երկրնքի,
Եւ զոհերուն բոլոր ինքեան ձրգելով
Կուտեալ արցունքը դարերով, դարերով
Անդընդոց մէջ հոսանք վըրայ հոսանքի

Պիտի հեղու կաղմելով նոր ուկէան
Մըկըրտութեան աւազան նոր մարդկութեան.
Յարեաւ Պայրըն, երգարարիչն անհունին.

Եւ ոյք ապա յարեան յերկրի կամ ծընան
Եւ յաւազան մըխըրճեցան դառնութեան
Պիտ' ըլլան տէրն, եւ ոչ ըստրուկն ա՛լ կեանքին:

(Շարունակելի)

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

Լանջքի տեղ՝ լայն պաստառ մը,
Ծըծի տեղ ծալք մ'ու ծալք մը
Գտնել ո՛հ դառն է, Տէ՛ր իմ:

Պրկո՞ւնք... ո՛հ պատրուածք մը,
Բարձի մսահամ բացք մը
Գտնել ո՛հ դառն է, Տէ՛ր իմ:

Թաշկինակ մը ու բարձ մը,
Հըրաթեշտ ու արցունք մը
Գտնել ո՛հ դառն է, Տէ՛ր իմ:

Եւ այդ բարձին վրայ քուն մը,
Յաւիտենին Հունկ քունը
Քընել ա՛խ դառն է, Տէ՛ր իմ:

Գիրք ծննդոց դառնութեան (Բաղին.
1911. Թ. 2) խորագրով հնչեակի մը մէջ
Եղիա իր եւ բոլոր տառապեալ հոգիներու
արցունքը հաւաքել կը տենչայ, բոլոր
դառնութիւնները հալեցնել բողոքի աւա-
զանի մը մէջ՝ նոր մարդկութեան մը ծը-
նունդ տալու համար, ուր այլեւս մարդը
պիտի չըլլայ ստրուկ կեանքին, եւ բոլոր
դառնացածները պիտի ըլլան տէրերը այդ
աշխարհին: Այս հնչեակը իբր յատկանը-
շական էջ մը Եղիայի, ամփոփուած է
հոս.

ՄԱՐԳԱՅԻՆ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՅԸ

Ա.

Նայեցաւ, դիտեց անգամ մըն ալ իր
գործը, եւ զոհունակութիւն զգաց: Իր
դնահատումը բաւական նկատեց: Ունէր
վստահութիւն՝ իր հանճարին վրայ, ու
երջանիկ զգաց ինքզինք: Մարդկութեան,
ապագայ սերունդներուն կու տար արձան
մը, որ որպէս օրինակ պիտի ծառայէր
անկասկած: Այս արձանին յատկացուցած
էր իր ամբողջական հանճարը, իր լաւա-
էր գոյն շունչը: Ձայն միայն կերտեց իր
կեանքին մէջ, իր ամբողջ կեանքին տե-
ւողութեանը, բայց այս գործը արդէն բա-
ւական նկատեց:

Դեռ կը դիտէր արձանը, ու յանկարծ
Ժպտեցաւ:

Եւ այն ատեն վերլիչեց իր անցեալ օ-
րերը, իր պայքարը, իր անվճատ հետա-
պնդումը իտէալին ետեւէն, աւելի զմայ-
լանքով նայեցաւ գործին որ իր առջեւը
կանգնած էր որպէս հպարտութիւն մը,
երեւակայեց այն սերունդը որ զայն պիտի
յիշէր, երանի տուաւ անոր, եւ զոհ էր,
եւ երջանկութիւն զգաց: Յետոյ՝ զոչեց
զոչեց ինքնիրեն.

— Պարտականութիւնս կատարեցի:
Հաւատաց իր հանճարին: Հաւատաց իր
գործին:

Եւ յետոյ դուրս ելաւ իր աշխատանո-
ցէն, անոր դուռը նախանձով գոցելէ ետ-
քը: Եւ իր կոչումը կատարած մարդու մը
համոզումովը:

Բ.

Ուրախ էր այս արձանագործը:
Ուրախ էր անիկա՝ մանուկի մը պէս
պարզ, մեծերու պէս համոզուած: Նոյն
օրը զնաց կանչելու գինիի սեղանի մը իր

բարեկամները: Պատերազմի սկիզբէն աս-
դին իրարմէ բաժնուած էին զանազան
պատճառներով, զանազան ուղղութեամբ:
Արձանագործը չէր լքած սակայն իր աշ-
խատանոցը, հոն շարունակելով իր սիրած
գործը: Բայց հասան բոլորն ալ. պատե-
րազմը վերջացած էր տարիէ մը ի վեր:
Արձանագործը գիրենք անխտիր ընդու-
նեցաւ իր աշխատանոցին մէջ, ձեռքի լայն
սեղմումներով: Իր զոհունակութիւնը, իր
յաջողութիւնը չզարտկող արտայայտու-
թիւններով: Եւ ըսաւ անոնց.

— Սերունդին՝ որ երիտասարդ է, որ
մեզի պիտի յաջորդէ, մարդոց՝ որ կ'ապ-
րին, զգացի պարտականութեան պէս,
զգացի կոչումի պէս, թողուլ գործ մը...:
Եւ աւելցուց իր բառերը շէշտով.

— Արձան մը՝ որ կատարելութիւնը
ներկայացնէր:

Իրեն նայեցան իր բարեկամները. յե-
տոյ իրարու ալ նայեցան իր այս բարե-
կամները:

Այն ատեն արձանագործը զոչեց.

— Ահա՛ այդ արձանը:

Եւ կանգ առաւ հպարտութեամբ: Դի-
տեց զայն, դիտեց բոլոր ներկաները, եւ
վերսկսաւ.

— Այս արձանը մեր մայրաքաղաքին
կեդրոնը, Ազգային հրապարակը պիտի
դուռի վաղը, լայն ու բարձր պատուան-
դանի մը վրայ: Հո՛ն պիտի տեսնէք զայն
այլեւս, ինչպէս բոլոր քաղաքացիները:
Ամէն օր մարդոց մէջը պիտի ըլլայ անի-
կա. պիտի տիրէ:

Հոս շունչ առաւ արձանագործը. խօ-
սած էր լրջօրէն, հաւատքով, կատարեալ
հաւատքով: Յետոյ Ժպտեցաւ ու ըսաւ
դեռ.

— Հին Աթէնքն անգամ պիտի նախան-

ձէր այս հրաշակերտին, որ կը ներկայացնէ մարդ մը՝ բնական տարողութեամբ: Նոր մարդ մը չէ սակայն անիկա. կը ներկայացնէ բոլոր դարերու մարդը: Բայց, ա՛յսպէս, նոր է մեր օրերուն համար. նո՛ր պիտի ըլլայ յաջորդ սերունդին համար ալ: Սեւեռուն է եւ ուղիղ՝ իր աչքերուն նայուածքը. եւ լայն հորիզոն մը կը դիտէ: Հասակն ալ ուղիղ՝ այս նայուածքին պէս, անոր հետեւելու պէս. եւ չի կքիր: Քալելու վրայ է, եւ կանգ չ'առնէ: Թեւեւրը սօթթած՝ բնո չունի. աղատութեան, անկախութեան շեշտը կը զգացնէ: Կուրծքը՝ մաքուր օդ ծծած, մաքուր օդը սիրողի վկայութիւնը կու տայ իր հպարտութեամբը: Զեռքերը՝ ներդաշնակ, առանց բիծի, անարատ, վստահութիւն կը ներշնչեն: Այտերը՝ կեանքը, առողջութիւնը, իր արեան մաքրութիւնը կ'արտայայտեն: Ոտքերը ամուր դրած է հողին վրայ. կ'ըսէ անոնց նայողներուն թէ կը սիրէ հողը, թէ իր ոյժը կ'առնէ հողէն, թէ պիտի չլքէ, պիտի չմատնէ զայն. եւ իր քալուածքը կը լսուի: Ես տուի մասնաւոր ուշադրութիւն՝ իր շրթունքներուն, իր ժըպիտին: Այս շրթունքները բնութեան նըւագին պէս կը կանչեն, արշալոյսին պէս անեղծ են. սէրը հոն պայծառ է, անխառն, զօրեղ, բացարձակ, փղբայրական. յանդիմանական հմայքով մը: Մեր սերունդին համար, բոլոր սերունդներուն համար կերտեցի այս մարդը: Տուի իրեն ինչ որ ունէի. — շունչ, այլասիրութիւն, հաւատարմութիւն, քաջ մարդու մաքուր ձեռքերը. այս ձեռքերը՝ պիտի տեսնէք թէ կ'արտայայտեն իր սիրտը, որ մեծ է, որ խաբել չի դիտեր, որ կը սիրէ արդարութիւնը, որ կրնայ արիւնոտիլ՝ վիշտէ, վատութենէ:

Հոս կանգ առաւ, նորէն դիտեց բոլոր ներկաները, եւ վերսկսաւ աւելի խանդավառուած.

— Երիտասարդութիւնս այս գործին կերտումին տուի. ամբողջ կեանքս, ամ-

բողջ արուեստս իրեն յատկացուցի, զոհեցի, կը հասկնա՞ք, իրեն միայն. այս կերտումը՝ միակ մտածումս, միակ խոհալս եղաւ: Ես երկու ընդհանուր պատեւրազմներն ալ տեսայ: Ուրիշ գործ արտադրելու պէտք չունիմ այլեւս: Իրմո՛վ վամ ես, իրմո՛վ կ'ապրիմ: Ո՛չ մէկ մայր ինծի չափ երկունք ունեցաւ:

Եւ արձանագործը դադրեցաւ խօսելէ: Ժպտեցաւ ներկաներուն, ետքը իր տեղը դրաւ: Հպարտ էր ու գոհ: Բարեկամները ծափահարեցին զինքը, դովեցին իր ստեղծագործումը, ու գինի խմեցին իր կենացը:

Գ.

Եւ հետեւեալ օրը կատարուեցաւ բացումը իր հրաշակերտին:

Կէսօր էր, արեւ կար:

Արձանագործը դարձեալ հպարտացաւ իր աշխատանքով. լոյսին տակ, յստակ լոյսին տակ՝ համոզուեցաւ, ինքզինք համոզեց թէ կերտած էր իր ուղածին պէս: Թէ իր նպատակին հասած: Արձանը կ'արտայայտէր իր հանճարը, եւ շունչը, ու առաքինութիւնները, զորս տուած էր անոր:

Նախարարը խօսեցաւ իր պաշտօնական ճառը. շնորհակալութիւն յայտնեց մայրաքաղաքին տրուած այս նուիրատուութեան համար, բացատրեց անոր իմաստը, ըսաւ թէ սերունդներ դաս պիտի առնեն, դովեց արձանագործին հանճարը: Արուեստագէտը կ'ուրախանար մանուկի մը պէս, զգաց թէ իր կեանքին ամէնէն երջանիկ օրն էր: Ծափահարեցին, իր ձեռքերը հազարաւոր մարդիկ թօթուեցին՝ հպարտութեամբ, շնորհաւորեցին զինքը:

Գ.

Երջանիկ էր եւ այլեւս անգործ՝ այս արձանագործը:

Եւ յաջորդ օրն իսկ Ազգային հրապա-

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Իսկ թէ երբեք դաժան մետեր Ուզեն փշրել սիրտըս բիւրեղ, Ո՛հ, այն ատեն հագար շողով, Սրտիս մէն մի փըշուրին մէջ Պիտի շողաս, բոցավառիս, Ո՛վ անոյշ դէմք հայրենիքիս:

Ափ մը ցեխ նետած էին իր արձանին դէմքին վրայ: Բայց արձանագործը դեռ երկար ատեն-կեցաւ հոն, երկար ատեն դեռ նայեցաւ իր արձանին, իր կերտած մարդուն՝ զայն ճանչնալու համար:

Սիրտը սեղմուած էր այլեւս. պիտի լար, բայց իր վիշտը, իր լացը չուրջի մարդոց ցոյց չտալու համար՝ տուն վերադարձաւ վաղելով:

Տունը՝ առանձին մտածեց:

Երկար ատեն խորհեցաւ, ցաւատանջ դուրսը իր երկու ձեռքերուն մէջ սեղմած: Երկար, չա՛տ երկար ժամանակ կեցաւ այսպէս: Յանկարծ իր արեւառն մաղբը քաշեց, եւ ժպտեցա՛ւ: Տակաւին չկրցաւ չկրցաւ հասկնալ՝ թէ ափ մը ցեխ ի՛նչ պէս կրցած էր անճանաչելի դարձնել իր հրաշակերտը:

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՊԱԶ

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Քեզի համար սիրտըս բոցեղ Հայելի մ'է լուսայատակ, Որուն խորքին մէջ դուն յաւէտ ժրպիտներով մայրագործով Պիտի շողաս, բոցավառիս, Ո՛վ անոյշ դէմք հայրենիքիս:

Իսկ թէ երբեք դաժան մետեր Ուզեն փշրել սիրտըս բիւրեղ, Ո՛հ, այն ատեն հագար շողով, Սրտիս մէն մի փըշուրին մէջ Պիտի շողաս, ժպտիս մորէն, Ո՛վ հայրենի դէմք լուսեղէն:

Քու վերելիդ ու Հաննարիդ, Քու լուսագարդ Ապագայիդ, Յոյսըս հասկ մ'է որ կաթոգին, Օտարաբոյր հողի վրայ կը հասունցայ քեզի համար, Ո՛վ հայրենիք կարօտավատ:

Իսկ թէ երբեք սեւ ամբակներ Ուզեն փակտել հասկը յոյսիս, Ո՛հ, այն ատեն մէկի փոխան՝ Հագար հասկեր պիտի ծըլին, Քու վերելիդ, յաղթանակիդ, Քու բազմաշող անմահ Փառքիդ: